Ը. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 2 ՄԱՐՏ 1905 — Թիւ 693

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տոլ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին առնչի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեկ տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԴԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԲԱԳՈՒԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԱՆՑՔԵՐԸ

—()o()—

Բ.

(Թիֆլիզի մեր թշխատակցին)

Արիւնալի անցքերի վերջը չէ, որ պիտի գրեմ։ Կը յիշի՞ վերջ արդեօք այդ արիւնհեղութեան եւ ե՞րբ, շատ դժուար է ասել. միայն այժմ սրտիս արիւնով պիտի գրեմ նորանոր սարսափներ, սոսկումներ մասին։ Ասում եմ պիտի գրեմ, բայց ի՞նչ պիտի գրեմ, ես ինքս էլ չգիտեմ։ Մի ամբողջ շաբթուայ ընթացքում անընդհատ կրած յուզմունքներից եւ չը տեսնուած ու չը լսուած գազանութիւնների անվերջ նկարագրութիւններից գլխումս այն պիսի ժխոր է կազմուել, որից երբէք հնարաւորութիւն չկայ իրականութիւնը գէթ մօտաւորապէս պարզող մի ընդհանուր պատկեր ներկայացնել։ Ո՛չ խելք է մնացել, ոչ սրտի ու մտքի հանգստութիւն։ Միայն կամքի ուժովն է, որ ես կարողանում եմ նստել եւ գրել եւ թող Աստուած այդ գրել համարի։

Չը գիտեմ, դուք ի՞նչ պիտի երեւակայէք այս ջղաձգական տողերը կարդալիս։ Չը գիտեմ, դուք ի՞նչ էք հասկացել ամսիս 9 (22)ին գրած իմ նամակից։ Արդեօք մարդկային միտքը կարո՞ղ է երեւակայել այն այն սարսափն ու սոսկումը, որը այժմ տիրում է Բագուում։ Շա՞տ դժուար։ դժուար մանաւանդ Եւրոպայում։ Բոլորովին նսեմանում են այդ պատկերի առաջ Չինգիզ-խանների, Նատիր Շահերի, Լենգթէմուրների կլասիքական սխրագործութիւնները։ Հռչակաւոր միջին դարերը տուել են մեզ «Բարթուղէմեան» գիշերի ահաւոր պատկերը։ Մարդկային պատմութիւնը դեռ ես չի տուել նման մի դէպք։ Պատկերացնո՞ւմ էք դուք արդեօք «Բարդուղէմեան» գիշերը իր ամբողջ ահաւորութեամբ։ Լիովին զգո՞ւմ էք արդեօք այն կրիտիքական ժամը, երբ մի ամբողջ ժողովուրդ անտէր անպաշտպան ոչնչանում է բիրտ գազանութեան ձեռքին։ Պատկերացնում է՞ք արդեօք դրանից է՛լ աւելի ահաւոր մի պատկեր. եթէ պատկերացնում էք, ուրեմն երեւակայեցէք այժմ Բագուում տիրող իրականութիւնը։ Բայց այդ երեւակայել կարո՞ղ էք արդեօք։ Մեր հեստիրիքական դարի ջղերը կարո՞ղ են դիմանալ այդպիսի պատկերների։ Ո՛չ, դուք հէնց առաջին տողից էքստազի մէջ կընկնէք. կը կորցնէք ձեր սրտի արիութիւնը եւ մտքի թելն ու կենտրոնը, Ողորմա՛ծ Աստուած. ինչեր եմ գրում ես։ Ինչ պիտի հասկանայ ինձանից իմ կարդացողը. ի՞նչ սարսափ, ի՞նչ սոսկում, ի՞նչ հիստերիկա, ի՞նչու համար այդ բոլորը. ի՞նչ հասկանանք դրանցից թէ ի՞նչ է պատահել։ Կը բացագանչէ անշուշտ չուարած ընթերցողը։ Այո՛, պարոննե՛ր, կատարածն ու կատաւողը իրենց ահռելի ութեամբ չանթահարում են մեր ուղեղը։ Եթէ մի հմայաշարհային ջրհեղեղ պատահէ, հաւատացնում եմ ձեզ, դա ա՛յն սարսափն ու սոսկումը չի առաջացնէ՝ ինչ որ Բագուի իրականութիւնը։ Բնութեան աղէտներ շատ ենք կրել, ահաւոր ու սարսափելի աղէտներ. բայց դրանց առաջ մենք կորագլուխ, անզօր կանգնած միայն լալիս ենք. ուրիշ է, երբ բնութեան աղէտից աւելի աղէտ պատճառում է մարդկային մտքի լարած մեքենայութիւնը. անտանելի է այլեւս, երբ սոսկումին ու սարսափին միախառնում է եւ զայրոյթը. այդպէս է այժմ ժողովուրդը մեզանում. ամբողջ երկրի ազգաբնակութիւնը ելեքտրականացած՝ ցաւում, խղճահարւում, սոսկում, սարսափում է կատարւող իրականութիւնից եւ դրա հետ միասին զայրոյթից ճայթում է, տեսնելով որ այդ զարհուրելի ապէտը միմիայն ռուս կառավարութիւն կոչուած ճիւաղի մեքենայութիւնների արդիւնք է։ Ներեցէք, ներեցէք, յարգելի պարոններ իմ անկապ անկապ, կիսկատար խօսքերին. գիտեմ, ձեր հասկացածը իմ ասածներից շատ չնչին բան կը յիշի, բայց ներեցէք մեզ, այս խիստ վայրկենիս այդ մեծ դժբաղդութեան մէջ գտնուողներիս։ Կրկնում եմ, անկարելի է, խելք, դատողութիւն, ուշադրութիւն ունենալ։ Ներկայ տողերը գրում եմ անընդհատ ցնցումներով։

Ես Բագուի իրականութեան ականատեսներից չեմ. այդ ցնցումները ես ստացել եմ միայն իմ լսածներից ու կարդացածներից։ Նայեցէք ահա այդ դժբաղդների վրայ, որոնք յաջողել են սարսափելի վայրից մի կերպ իրանց ձգել Թիֆլիս. նայեցէք այդ չուարած դէմքերին, մարմնացած սոսկում ներկայացողների վրայ. ի՞նչ են ասում ձեզ նրանք իրանց լռութեամբ. այն՝ որ անկարելի է մարդկային լեզուով պատմել, պատկերացնել։ Հարցրէք դրանցից ի՞նչ է կատարուել այնտեղ. մի՞թէ՞ նա կարող է ձեզ որոշ մի պատասխան տալ. նա դեռ եւս յանկարծակիի մէջ է. նա դեռ չի կարողանում որոշել, թէ ի՞նչ է կատարուում իր հետ, իր շրջապատում. նրան թւում է, թէ ինքը երազի մէջ է եւ խեղդւում ճնշող կոշմարից։

Դեռ երէկ, խաղաղ աշխատանքի յետեւից, բոլորովին սիրամիտ հայ ժողովուրդը այսօր յանկարծ տեսնում է, որ թիւրք զինաւորուած խաժամուժը մրջիւնի նման լցրել է քաղաքը եւ անխնայ կոտորում է հայերին, առանց [illegible] եւ հասակի, [illegible] մասաղ գիմնազիստ[illegible] [illegible] լատանման տները [illegible] լինում, հրդեհի ճարակ դառնում։ Սոսկալի աւերածը, աւարառութիւնն ու կողոպուտը բռնել են ամբողջ փողոցները. հայոց խանութները ջարդ ուփշուր են լինում եւ հարստութիւնը թալանի ենթարկւում. բազմաթիւ ականաւոր հայ ընտանիքներ, մինչեւ վերջին երեխան մորթազերծ լինում. կանայք եւ օրիորդներ բռնաբարւում եւ ապա մերկացրած, պատուհաններից ցած են շպրտւում փողոց։ Քաղաքում ամենայայտնի գեղեցկուհի հայ միլիոնատէր տիկնոջ ամբողջ տուն ու ընտանիքը ջարդ ուփշուր անելուց յետոյ, իրան եւ այլ մերկութեամբ, առանց թզենու տերեւի, ձեռքից բռնած փողոցներն են մատնած։ Փատմելի անցքերի նկարագրութիւնը դեռ սպասում են յետոյ լսելու, աննկարագրելի է դրութիւնը փողոցներում. արիւնը հոսում է ամէն տեղ, դիակներով ծածկուած են բոլոր փողոցները եւ օրերով մնում են այդպէս թափթփած, ճխլտուելով մոլեռանդ թուրք խուժանի ոտների տակ։ Սպանուածները հազարաւորներ են, իսկ վիրաւորներն անհաշիւ։ Փողոցներում ընկած հարուստ տիկիններին կողոպտելու համար թուրք խուժանը կտրատում է նրանց պարանոցը, մատները՝ թանկագին զարդերը հանելու համար. ժամանակ չկայ արձակելու. անհնարին է նկարագրել փողոցների զարհուրանքը. դեռ եւս ոչ մի վկայ չկայ դժբաղդ քաղաքում կատարուածներին. հասած կիսկատար տեղեկութիւնները փախչողների պատահմամբ տեսածներն. ոչ հեռագիր կայ եւ ոչ մի բան. ամբողջ հայ ազգաբնակութիւնը չգիտէ ո՞րտեղ պատսպարէ իրան այդ սոսկալի բարբարոսութիւններից։ Չը կայ ո՞չ իշխող ոչ պաշտպան. տիրում է կատարեալ անիշխանութիւն, բառիս բուն նշանակութեամբ։ Փողոցներում պատահող սակաւաթիւ կազակները ուղղակի ոչ մի միջամտութիւն չեն ցոյց տալիս։ Ամէն մի հարցի նրանք պատասխանում են, որ իրանց հրամայուած է թուրքերի առաջ ոչնչով արգելք չը լինել։ Նրանք զուարճանում են փողոցներում, առատօրէն կօնձելով իրանց հոգի ու հաւատ օղին. ամբողջ հինգ օր կոտորածից ազատ մնացած հայերը մնացել են փակուած առանց հացի, առանց ջրի. մեծ մասը անտեղեակ ընտանիքի միւս անդամների դրութեան, արդեօք մեռա՞ն նրանք թէ մնացին։ Կոտորածի սարսելի աէքը խաղաղ իրանց գործին են եղել եւ պատսպարել են ուր պատահել է։ Հնարաւորութիւն չը կայ քաղաքից փախչել որոնք կարգանում են կազակներին։ զինուորներին առատ վարձատրել—վճարելով 20 ռուբլուց մինչեւ 500 ռուբլի— այն էլ ռիսկով մատիկ, հազիւ կարողանում են դրանց հովանաւորութեամբ մի կերպ իրանց երկաթուղու կայարանը գցել։ Ոչ մի կառք չը կայ։ Բայց ինչ է ներկայացնում կայարանը. այն տեղ անիշխանութիւնը սոսկալի չափերի է հասել առաջին կարգի 5 ռուբլիանոց տոմսակի համար պահանջում են 50 ռուբլի. նոյնը եւ միւս կարգերի վերաբերմամբ։ Ծուն ու տեղ թոզած ու չփլած դուրս փախած ժողովրդին ո՞ւր է այդքան միջոց. կամ թէ առանց տոմսակների լցւում են վագոնները եւ ճանապարհին սկսում է մի սարսափելի իրարանցում։ բացի դրանից, Թիֆլիսի եւ Բագուի մէջ գտնուող Բալաֆարի կայարանում վիստում են գինուած բարբարոս թուրքեր, որոնք խուժում են վագոնների մէջ եւ հայեր փնտռում, կոտորելու համար։ Այդ պայմաններին մէջ Բագու քաղաքից կայարան փախած հայերի չնչին տոկոսն է միայն կարողանում Թիֆլիս եւ ուրիշ տեղեր դիմել. մնացածը այնտեղ կուտակւում են իրար վրայ եւ իրանց դրութեամբ աննկարագրելի ցնցում առաջ բերում տեսնողի ջղային համակարգութեան վրայ։ Չը նայած այն հանգամանքին, Թիֆլիսում էլի այնքան եկել են հայեր, որ բոլոր հիւրանոցները եւ նոմերները բռնուած են. մտածւում է յատկապէս բնակարան վարձել Բագուից փախչողների համար։ Բագուի մօտերում առ այժմ յայտնի մի հայ գիւղ ամբողջովին սրի ճարակ են դարձրել. բոլոր հայ գիւղերը նոյն վտանգին են ենթարկուած. ռուս կառավարութիւնը զինել է ոչ միայն Բագու քաղաքի թուրքերին, այլ եւ գաւառի թուրքերին. Սոսկալի ջնաթն է տիրում

Բագու, քաղաքում եւ գուցէ նա տարածուի ամբողջ Կովկասում եւ ապա ուրիշ տեղերում։

Ի՞նչ նկարագրեցի եւ ի՞նչ թողի չգիտեմ. կարողացա՞յ արդեօք ձեր առաջ պարզել մեր իրականութեան պատկերը, գէթ չատ աղօտ կերպով. հաւատացած եմ, որ ոչ. բառեր չը կան, որոնք լիովին արտայայտեն սատանայի միտքը։ Սոսկում, սարսափ, պատուհաս, զարհուրանք, ցնցում, դժոխք. սպանդանոց ողորմելի բառեր են, որոնք մեզանում արդէն այնքա՛ն սովորական են։ Մեր ներկայ իրականութիւնը նկարագրելու համար հարկաւոր է մի բացառիկ լեզու, գէթ հարկաւոր են այնպիսի բառեր, որոնց գործածելը հնար լինէր միայն «բարդուղէմեան» գիշեր, Բագուի ներկայ իրականութիւն եւ ոուս ճիւաղային կառավարութեան այլանդակութիւնները նկարագրելու համար. ո՞ւր է այդպիսի լեզու. երեւի մարդիկ կը հարկադրուին այդպիսի մի բան ստեղծելու. եթէ դա կը լինի, ես էլ այն ժամանակ կարող կը լինեմ ձեր առաջ դնել մեր իրականութեան կատաբեալ պատկերը...

Բագու չուտ չի հանդարտուելու. յուզմունքն ու զայրոյթը այն ատիճան ելեքտրականացրել են Կովկասի ամբողջ բնակչութիւնը, որ բոպէ առ բոպէ սպասում ենք, թէ ահա նա կը պայթի մեր երկրի այս կողմում, այն կողմում եւ վերջապէս ամէն տեղում։ Կենդանի կը մնա՞նք արդեօք հեռաւեալ սարսափների նկարագրութիւնը տալու, ոչ՝ չեմ կարող երաշխաւորել։ Արդէն կառավարութեան լարած մեքենայութիւններից խառնակութիւններ առաջ բերել մեր քաղաքում եւ ուրիշ տեղեր մի քանիսը բռնուեցին։ Երէկ Թիֆլիզի կայարանում ժողովրդի պահանջմամբ ձերբակալուեցին թուրքի հագուստներով ծպտուած կառավարութեան երկու գործակալներ, որոնք նոյն կերպ ծպտուած Բագուում հայեր կոտորելուց յետոյ, եկել էին այստեղ վառօդի բնաւորութիւն ըստացած ժողովրդի մէջ կայծ նետելու։ Վրաց հասարակութեան մէջ մի քանի օր առաջ, վրաց յեղափոխական կոմիտէի անունից վրացերէն լեզուով մեծ քանակութեամբ թռուցիկներ են տրուած, կոչ անելով պատրաստուել հայերին կոտորելու, որովհետեւ վերջիններս ուզում են վրացիների վրայ յարձակուել։ Այդ տեղեկանալով անմիջապէս հայերի մօտ են գալիս վրաց պարագլուխներից եւ միամտեցնում, որ այդ զզուելի կոչը հրատարակել է մի դաւադիր ձեռք— եւ կասկած չկայ, որ դա ոուս կառավարութիւնն է—, որ իրանք հայերի լաւ բարեկամներն են եւ իրանց կողմից հրատարակում են մի թռուցիկ պարզ լով վրացի հասարակութեան առաջ այդ կոչի ինչ լինելը։

Որ թուրքերի հայերին կոտորելը լոկ ոուս կառավարութեան գործն էր դրան ապացուցանելու համար ժամ առ ժամ անհամբեր փաստեր են լոյս ընկնում։ Կառավարչապետի օգնական Մալամայի խոստումներից՝ միջոցներ ձեռք առնել դադարեցնելու արիւնհեղութիւնը մինչեւ այժմ էլ ոչինչ չիրականացաւ։ Գազանութիւնները շարունակւում են մինչեւ այս իսկ ժամս էլ։ Թուրք ամբոխը ամբողջովին զինուել է կառավարական արտաքանակներով եւ բերտաններով։ Քաղաքի ամէն յայտնի փողոցներում էլ թուրքերը ունին յայտնի կերպով զէնքի պահեստներ, ուր հարկաւոր ժամանակ զինաւորւում և դուրս են գալիս։ Կոտորողների եւ տեւից առնում են արկղներով փամփուշտներ, որպէս զի պաշարը երբէք չսպառի։ Իրանք թուրքերը բացարձակապէս ասում են որ զէնքերը իրանց բաժանել է ոստիկանութիւնը։ Զինւորները հայերի ձեռքից զէնքը խլում և յանձնում են թուրքերին բաց արձակ կերպով։ Թուրքերը օրեր առաջ պատրաստ էին արդէն որոշած օրին դուրս գալու։ Մալաման եւ Թիֆլիսի նահանգապետը գնացին Բագու. բայց ի՞նչ արեցին։ Ժամանակ և համբերութիւն չկայ թելու փաստերը։

Այս իսկ բոպէիս ազգաբնակութեան միակ ցանկութիւնն է հնչտացնել հաշտութեան պայմանները եւ ամէն միջոց, ամէն հնար ի գործ դնել, որ Բագուում դադարէ արիւնհեղութիւնը և ուրիշ տեղերում էլ նոյնը չրռնկի։ Այստեղ ամէն օր տեղի են ունենում բազմաթիւ ժողովներ՝ խորհելու խորհրդակցելու այդ միջոցների մասին։ Հայ և թուրք հոգեւորականութիւնը, եռանդուն քաջալերելով ամբողջ ձայնաւորներով, պարսից կոնսիւլը և վերջապէս բոլոր փոքր ի շատէ յայտնի մարդիկ միաբան միեւնոյն բանի համար են աշխատում։ Բոլոր ժողովներն էլ լինում են բազմամարդ. տգմկալից եւ լի անզուսպ զայրոյթով դէպի կառավարութիւնը։ Մեր քաղաքում էլ բոլորովին վերացել է ոստիկանական հսկողութիւնը, այլեւս փողոցներում ոստիկաններ չեն երեւում։ Լրագրութիւնը ազատ նկարագրում է իրերը և մեղադրում կառավարութեանը։ մի բան, որ ընդհանուր զարմանք է պատճառում։ Ի՞նչ է թագնուած արդեօք այս խաղի տակ... դժուար չէ գուշակելու։ Այսօր վեհափառ կաթողիկոսը պէտք է ժամանէ Թիֆլիս։ Երկու օր է որ բոլոր գպրոցներում պարապմունք չկայ։ Երէկ Թիֆլիսի ռէալիստների նախաձեռնութեամբ վանքի մայր եկեղեցում տեղի ունեցաւ հոգեհանգիստ, Բագուում կոտորածների համար։ Այսօր էլ նոյնը կատարուեց Թիֆլիսի բոլոր ուսումնարանների աշակերտ աշակերտուհիների ներկայութեամբ։ Եկեղեցու ընդարձակ գաւիթը ամբողջովին խիտ առ խիտ լցուած էր ժողովրդով։ Հոգեհանգստից յետոյ, հայերի կողմից ուղարկուած պատգամաւորների հրաւէրով մեզ մօտ եկան թուրք հոգեւորականներից և պատուաւոր անձերից 6—7 հոգի, որոնցից երկուսը ճառ խօսեցին։ Յայտնելով հայերին իրանց եղբայրական զգացմունքները եւ նզովելով չէյթանին, որ պատճառ եղաւ Բագուի կոտորածին։ Վաղը—կիրակի թուրք հոգեւորականութեան հետ միասին լինելու է աւելի հանդիսաւոր հոգեհանգիստ, նախ հայոց եկեղեցում և ապա ամբողջ հայ ժողովրդով միասին թուրքերի մզկիթում։ Արդեօք վաղը խաղաղ կանցնի մեզ մօտ...

Կարող եմ յայտնել որ Սիրանոյշի և Պետրոսեանի սպաննուելը սխալ դուրս եկաւ։

Կովկասի Շիա մահմէտականների Շէյխ-իւլ-իսլամը անցեալ օր գնաց Բագու։ Ամբողջ հայ և թուրքիհոգեւորական դասը միասին դիակների վրայով չրջում էին փողոցներում եւ խաղաղութիւն ու հաշտութիւն քարոզում։ Բայց հնարաւո՞ր էր հաշտութիւն հոսող արեան մէջ։ Նորանոր լուրեր են գալիս, որ կոտորածները շարունակւում են և այս անգամ կոտորողները թուրքերն են։ Զօրքերի պատնէշը այլեւս անկարող եղաւ Բագուի չրջակայքում արգելուած հայերին զսպել։ Նրանք վազեցին մահն աչքերնին առած, ծակծկելով զինւորների սուիններից և լցուեցին քաղաք. Պէտք էր հատուցումն եւ եղաւ. Կոտորող թուրքերը ջարդուեցին ոուսների և գնդակների տակ. Հրէշագործ նազաշիձէն տանը չգտան, որպէս զի ամբողջ տնով օդը թռցնէին։ Նա փախել էր. Երէկ լուր հասաւ, որ ոտքից վիրաւորուել է, Բագուից նոր եկողները պատմում են, որ փողոցներում շատ են թուրքերի դիակները. Բալախանում մեծ կոտորած է եղել թուրքերի մէջ. Սոցիալիստներն անկարող լինելով զսպել իրանց ժիանում են հայերին և ջարդում թուրքերին։ Այսօր այստեղից բաւականաչափ զօրք ուղարկուեց Բագու. արդէն լսում ենք, որ արդէն չրջապատել և կղզիացրել է կռուող հայերին։ Երեւի շուտով պատերազմական դրութիւն կը յայտարարուի և այս անգամ կառավարութիւնն ինքը կը կոտորէ հայերին։ Սպասենք տեսնելու թէ ինչ անակնկալներ են լոյս ընկնելու.

ՁԱԼԱԳ

Թիֆլիս, 12 փետր.

Ի ՆՊԱՍՏ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻՆ

—○○—

ՓԵՏՐ. 22-Ի ՆԵՐԿԱՅԱՑԱՆՈՒՄԸ

ՇԱՐԺՈՒՄ իր նախորդ թուով, մի քանի հապճէպ տողերի մէջ խտացուցած էր ներկայացման նպատակն ու յաջողութիւնը, այնպէս որ աւելորդ կրկնութիւն մը պիտի լինի՝ եթէ մոռնանք աւելի գունաւորել ախուր պատկերը՝ Սասունցիների սիրտ բզկտող վիճակին։ Մանաւանդ «Շարժումի» նոյն օրուան յաւելուածը պիտի բաւէր Վառնայի հասարակութեան համար, որ արդէն ինքնաբերաբար ցոյց տուաւ իր պարտականութեան գիտակցութիւնը հանդէպ հազարաւոր սովամահ զոհերին որոնց անսահման տառապանքը գթութեան միայն կը կարօտէր։

Ու անշուշտ իւրաքանչիւր հայ, որ իր կուրծքին տակ իր ցեղին սիրտը կը կրէր, չէր կարող ամտարբերութեամբ վերաբերուիլ այն անհուն ու լափիզող թշուառութեան՝ որ օտար սրտերն անգամ դղրդեց։

Պատիւ ուրեմն Վառնացիներին։

Ներկայացումը, իր տարամերժօրէն հայկական հանգամանքովը, իրաւունք ունէր քաջալերութեան, ու մանաւանդ ԳՈՂԹԱՆ խմբի կողմէ թափուած եռանդագին ճիգերն ու ջանքերը իրենց նպատակին արդիւնաւորումովը միայն պիտի արդարանար։

Տասնեհինգ օրերի կարճ ժամանակամիջոցում ձեռք բերուած այս յաջողութիւնը որ հանգիսականների ընդհանուր գոհունակութեամբ գնահատուեցաւ, կը պարտաւորինք մասնաւորապէս մեր համակրելի ձայնագէտ պ. Նաթան Ամիրխանեանի անձնուէր ճիգերին. զորս չի խնայեց, իր վրայ դրուած յոյսերը արդարացնելու ազգային նախանձախնդրութեամբ մը։

Ուրախալի է ըսել, որ Վառնայի հասարակութիւնը անշուշտ մեծ բաւականութեամբ ու հրճուանքով դիտեց, անակնկալօրէն իր առջեւ հանդէս եկող աղջիկնկրը որոնք ընդհանուր ներդաշնակութիւնը կազմեցին եօթանասուն հոգիէ բաղկացած երկսեռ խմբին և իրենց ոգեւորիչ գիտակցութիւնով շատ ծնողների նախանձը գգուեցին։

Երգեցիկ խմբի ամենէն փայլուն արտայայտիչը եղաւ յարգելի օրիորդ Բերուզ Զօլաքեանը, որ իր ազնիւ երգերուն մէջ մեծ ընդունակութիւն ցոյց տուաւ։ Իր կիրթ ու ներդաշնակ ձայնը ապագայ մեծ յաջողութիւնների յոյսը կը ներշնչէ մեզ։

Կարգադիր մասնախմբի և ԳՈՂԹԱՆ խմբի կողմէ ծաղկէ փունջեր նուիրուեցան պ. Ամիրխանեանի և Օր. Զօլաքեանի, ի պատիւ և ի գնահատութիւն։

ԳՈՂԹԱՆ Երգեցիկ-Նուագախումբը որ բացի մի քանի փոքր անդամներէ բոլոր նորեկներից կազմուած էր, հիացման արժանի էր իրենց նախնական քայլերի մէջ ցոյց տուած յաջողութիւնը, և մենք կը յուսանք թէ իրենց համար խրախոյս մը պիտի լինի այս ընդհանուր քաջալերութիւնը, նկրտելու համար աւելի մեծ յաջողութիւնների։

Չի մոռնանք յայտնելու թէ՝ չնորհաւորութեան արժանի են այն ծնողները, որոնք լուսամիտ մտածումով մը արհամարհեցին կարգ մը նեղմիտ մարդոց կողմէ եղած արգելքները և ազատ թոյլ տուին իրենց դուստրերին մասնակցել Երգեցիկ խմբին, որուն յաջողութիւնը գլխաւորաբար անոնցմէ կախուած էր։ Այս վարմունքը՝ որքան գովելի՝ նոյնքան պատուաբեր է ժամանակակից ծնողների համար, որոնք հայ ծնողների՝ ընդհանրապէս ունեցած նախապաշարումէն բարձր, անկախ ու գիտակից ըմբռնումով մը վերաբերուեցան։

Երկու թատերախաղերը «Վրէժ» և «Արիւնոտ Հայը» զուտ ազգային ժամանակակից յեղափոխական կեանքէն առնուած, իրենց թէեւ արուեստէ զուրկ, բայց յուզիչ ու կենդանի տեսարաններովը վերարծարծելու բնութիւնը ունեցան զգացող սրտերի մէջ հայ տառապանքի կենդանի ու յարաճուն ցաւը։ Դարաւոր սարկութեանց ճնշուած ձայնն էր որ ճակատագրօրէն ներկայ պերնդին ընդվզող հոգիէն կը պոռթկար։

Մենք մաղթելով որ ԳՈՂԹԱՆ Երգեցիկ խումբը իր համեստ ուժերով յարատեւ ընթացք մը տայ իր կրթիչ գործունէութեան ի դէպ անպատեհ չենք սեպեր մի քանի դիտողութիւններ ընել անշուշտ նախանձախնդիր զգացումով մը, որ կրնայ միայն ծառայել իրենց վրայ դրուած յոյսերի պարբերական իրականացումին։

Դերակատարների մէջ գլխաւորաբար Պ. Մ. Ենովքեան իր «Տէտէ»ի պատասխանատու դերում շատ խրճմտութիւն ցոյց տուաւ. թէեւ նուազ կիրք, բայց դաւաճան Տէր Ղուկասին վրայ կատարած տէոորի՝ շատ բնական ու յուզիչ էր։

Իսկ Պ. Ս. Գալէնտէրեան՝ իր մատնիչի երկու դերերին մէջ էլ պահեց յատկութիւնը «դժոխքի պատուհանների նման սլաքացող երկդիմի չար աչքերը» բոլորովին կարտայայտէին դաւաճանների յատուկ տխուր ու պրժգալի հոգեբանութիւնը։

Պ. Կ. Բաշայեան՝ իր հայդուկի եւ իւզբաշիի երկու հակադրական դերերի

մէջ էլ յաջող դուրս եկաւ։

Պ. Բ. Շահապեան ոչ նուազ յաջողութեամբ կատարեց իր խմբապետի և զինակիրի դերերը։

Պ. Հ. Համբարձումեան՝ իր Օհանի դերին մէջ շարժումների մասին շատ յաջող անցաւ՝ իսկ արտայայտութեան ոչ այնքան։

Պ. Մ. Զիլթաճեան՝ Միւլազիմի դերին մէջ, հակառակ իր Ճիգերուն ոչ շարժումները և ոչ էլ արտայայտութիւնը համապատասխանեցին։

Պ. Ա. Ասլանեան իր Մուկուչի եւ Սրգէի դերերը լաւ արտայայտեց։

Պ. Պ. Սրապեան Համզաբէկի դերին մէջ քիւրտէ մը աւելի կորով տրուաւ իր ձայնին որ քիչ մը միօրինակ ու չափազանց էր։

Պ. Պ. Բ. Ղուկասեան, Մ. Շէլպէթճեան և Պ. Միհրան (Բանաստեղծ) յաջող տարին։

Իբր սիրողներ ընդհանրապէս բոլորն էլ ցոյց տուին որոշ չափով ընդունակութիւն բացի Պ. Վ. Գալէնտէրեանէն որ շատ քիչ յարմարութիւն ցոյց կուտայ բեմի վրայ երեւալու։ Մենք խորհուրդ կուտանք որ եթէ ոչ երբէք՝ գէթ ուրիշ անգամներ աւելի թեթեւ դերեր ստանձնէ։

Ս. ՉԱՐԻՀԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուրմիա, 1 փետր.

1895—96 թուականների հայկական կոտորածների ժամանակ, երբ տաճկահայ ժողովուրդը մոռացել էր ամէն ինչ՝ նահատակուած զաւակներ, կին, աղջիկ, տուն, հարստութիւն և փախչում էր ազատ երկիրներ իր գլուխը ազատելու, քրտի, տաճկի բռնակալ արիւնոտ սրից, հէնց այդ ժամանակներում գաղթականների հետ միասին, Կովկաս, Պարսկաստան, Ամերիկա, Եգիպտոս և այլ երկիրներում երեւան եկաւ և մի խաչագողական հոսանք։ Փոխանակ այդ պարոնները մտածելու, դատելու, երկրի պայմանների, իրենց ընդունակութեան համեմատ արդար գործ գտնելու և միջոցներ ձեռք առնելու, իրենց թշուառ եղբայրներին ծանր պարագաներից հանելու, նորանց դրութիւնը բարւոքելու, հայրենիք վերադառնալու մասին մտածելու, սկսեցին ինչքան թոյլ են տալիս իրենց ուժերը, հարստահարել կողոպտել, կեղեքել, զանազան խաբուսիկ յոյսերով վերջին կոպէկները խլել, առանց այդ էլ ծայրահեղ թշուառութեան դուռը հասցնել խեղճ հայ ժողովրդին։ Բացի դրանից, ամէն տեղ խոշնգոտ, խառնակիչ հանդիսանալով, մինչեւ իսկ տեղական ժողովրդի հասարակական գործերում, արատաւորելով և իսկական գործիչներին։ Այ ինչ խաչագողական մասնաճիւղում ճարպիկ, ընդունակ, հեշտութեամբ խաբող էր անվախ առաջ նետուելով սկսեց իր ժրաջան, լիրբ, սրիկայական, անարդար գործունէութիւնը։ Իզուր մամուլը ձայն բարձրացրեց («Հայրենիք», «Շարժում» մասամբ և «Մշակ» և «Մուրճ») գրեց, մերկացրեց, այդ թշուառականների ապգակործան ընթացքը, բայց անամօթ մարդկանց, խաչագողի համար, արդեօ՞ք, ինչ նշանակութիւն ունի մամուլի արդար ձայարդար բողոք, խղճի խայթ։ Չէ որ նորանց մէջ ամէն տեսակ մարդկային վսեմ զգացմունք բթացել, քարացել է, չէ որ խաչագողի համար գոյութիւն չունի ազգ, հայրենիք, ազգային յեղափոխութիւն, եկեղեցի, կրօն։ Խաչագողը ամէն ինչ պատրաստ է զոհել միմիայն և միմիայն իր գրպանի համար, որովհետեւ նորա թէ՛ ազգը, թէ հայրենիքը, թէ յեղափոխութիւնը, թէ եկեղեցին և կրօնը իր գրպանն է. (անտէր մը նայ այդպիսի գրպանները)։

Այդ ինքնակոչ պարոնները առաջ եկան ուսուցչի, հրապարակախօսի, յեղափոխականի դիմակի տակ, որոնք ոչ միայն, իրենց կոչումով արժանի չէին այդ անունները կրելու, այլ մինչեւ իսկ արտասանելու։

Մի կողմ թողնելով կեղծ հրապարակախօսների, յեղափոխականների և այլն մանր մունր խաչագողների կեղտոտութիւնները նորից շեշտելու, որովհետեւ այդ բոլորի արարքները ժամանակին մեր բարեխեղճ հրապարակախօսները(*) մերկացրել են և շարունակ մերկացնում են։

Մենք միմիայն այս յօդուածով կը ծանօթացնենք կեղծ. խաչագող ուսուցիչների գործունէութիւնից մեկից մի փոքրիկ նմուշ առաջ բերելով։

Ուրմիոյ տգէտ ժողովրդի կացութիւնից օգտուելով երկու տարի առաջ այդ պարոններից մէկը Ուրմիան իր դործունէութեան համար լայն ասպարէզ ընտրեց—այդ պարոնը Միքայէլ Պապիկեանն էր, որին յաջողուց [illegible] տարի (1904) վռնտել ուսումնարանից, նա էլ շնորհիւ մի քանի բանիմաց երիտասարդների, որ բոլորովին խզեցին ուսումնարանից նորա կապերը։ Այդ պարոնը կատարեալ ցեց էր դարձել Ուրմիոյ ժողովրդի գլխին, նորա հեռանալուց յետոյ ժողովուրդը, այժմ հազիւ է շունչ քաշում։

Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը երկու տարով վարձում է Ուրմիոյ Ուսումնարանի համար տեսուչ եւ ուսուցիչ առանց ուշադրութիւն դարձնելով նորա ցնցին, միայն խղճալով նորա թշուառ կացութիւնից։ Երկու տարի այս հաստատվոր, այդ ապիկար, մեծագլուխ տգէտ, խաչագող Պապիկեանը տեսուչ և ուսուցիչ եղաւ տեղւոյս ուսումնարանին, շնորհիւ իր տգիտութեան գոէհիկութեան որբապղծեց, թէ թատրոնական բեմը և թէ ուսումնարանը։ Պապիկեանի տգիտութեան զոհ է գնացել համարեա ամբողջ մատաղ սերունդը—աշակերտները։ Ուրմիոյ աշակերտները որոնք այդ ուսումնարանն են յաճախել և Պապիկեանի մօտ են դաստիարակուել, փոքրիկ փողոցային որբիկաների տպաւորութիւն են թողնում։ Մի՞քայէլ Պապիկեանի նման անհատները, ինչպէս վերեւում շեշտել եմ, ոչ թէ այն նրպատակաւ են մտնում այն ասպարէզը, որ աշխատին մատաղ սերնդին դաստիարակելու կըրթելու և նորանցից պատրաստելու ազգի համար պիտանի անհատներ, այլ որպէս մի միջոց իրանց դատարկ գրպանները պարարտացնելու ազգի սուղ փողով։ Իսկ ազգի զաւակները ուսումնարանը ինչ ուզում է թող լինի։ Ուրմիա քաղաքի թէ ուսումնարանը և թէ բեմը զետեղուած է մի սենեակում այնտեղ է և գրադարան-ընթերցարանը։ Իսկ Պապիկեանի օրով, այսպէս էր բաժնուած, թատրոնական բեմը իբրեւ ննջարան և պոռնիկ կանանց դիշերային օթեւան, ուսումնարանը ծառայում էր իբրեւ ընդունարան թղթախաղի նարտիի սենեակ խոհարան, իսկ գրադարանի պահարանը բախիի և գինիի շիշերի համար իբրեւ սառը և ապահով տեղ։ Դիշերային անառակ կեանքից յետոյ առաւօտեան սովորաբար վեր էր կենում 10 կամ 11 ժամին աշակերտներից մէկին ուղարկում էր Ջրի եւեւից միւսին սապոնի, լացելուց յետոյ սկսում էր իր ազգային հրամանները և պատուէրները՝ մէկին պատուիրում էր կերակուր բերելու, երկրորդին ուղարկում էր շուկայից հաց բերելու այսպէս շարունակաբար կեզտոտ ամանները լուանալու,

(*) առանձին շնորհակալութիւն ենք յայտնում «Հայրենիք»ի խմբագրութեան իր մերկացումների համար։ Ինչպէս մենք, այնպէս է համարեա ամբողջ Պարսկահայ երիտասարդների այն մասը, որը զզուելով զզուում է ազգակործան գործիչներից։

դատող, իր անաչառագիտութեամբ եւ ժրաջան աշխատանքով տունը կը կառավարէր. Երկան բացակայութեան ժամանակն իսկ։ Վառվառը սկսած էր խոր սրտով և քենով նայիլ այն մարդուն վրայ որը պատճառ եղաւ զաւակներն ու իրեն ձգեց ծովերու ետին։ Ամէն անգամ երբ Թորոս աղխարը աչքին կերեւնար սիրտը աւելի և աւելի կը լեցուէր։ «Ինչուս պէտք ես իյնայի ծովերու ետին, տուն ու տեղս բրչակ դարձնէի հող ու այգի խրապան, հազար հեզ գլխի մարդ չեմ գար դուն տուն դարձիր, ի՞նչ քրի ջի կարողցուց վրան։ Էն վերջը գիրն ու խապարը կտրեց,»— չե՞ս գար մէկ փարա չեմ ճամբեր գրեց, վեց տարի լեռների վրայ նստայ ճամբան պահեցի, նայելէն աչքս սեւ ջուր իջաւ, ախր ելայ ինկայ երկրոց երկիր այն պէկուման բնին տակ։ Մուրազին հասաւ։— է՛դ երկիրը ալ չապրիր կնիկ,— կըսես որ մինակ մենք էինք մնացեր, ազգ մի ազգով հոն չեն ապրեր, անոնք ինչ մեզ ալ ան։ Անխիղճ անհոգի մարդ, բերաւ որ զաւակներուս ու անբաղդիս հողը հոս բանայ...» Հայուհին ինքնիրեն կը մրմնջար, կուլար և կանիծէր այն ձեռքը որ քաշեց ձգեց զիրենք հեռու երկիրներու ծովերու ետին։

Մինչ Վառվառը խոր վշտերով ու մտածումներով լեցուած կը շարժէր գլուխը և քթին տակ տխուր երգ մը կը մղմղար, անոր կարկաուքին վրայ բարձրացաւ գարնան աւետաբեր Զատիկը որ անհոգ անվախ կը թեթեւաբ դէպի շարժուող մատները։ Վառվառի սրտէն խորունկ ուրախութիւն մը թրթռաց որ անցաւ անոր մահագոյն դէմքէն եւ իրՁրոլոր վշտերը մէկէն մոռցած՝ բռնեց միջատի նախշուն թեւերը միացուց ցամքած շրթունքներուն և կուշտ կուռ համբուրեց։ «Բարով գարուն նախշուն գարնակ, ո՞ւրկի կուգաս, որմի՞ աշխարհէ մեր վէյթնին ճամբան ուրկից է?..» հարցուց հետաքրքրութեամբ, կապուտցած աչքերը լեցուցան և անսպառ ադրիւրի մը պէս լուսաւորուր արցունքները սկսան վար թափիլ։ Սիրան այրած կիներ վար ձըգեց ասեղն ու դերձանը, խելագարի պէս նետուեցաւ դէպի պ. տունը բացաւ դեղկերը։ Պաղ անուշ հով մը փչեց դէպի ներս, զարնուելով անոր ճակատն ցրցքնեց խորժ մազերը։ «Օ՛խ... օ՛խ... անուշ չունչովդ մեռնիմ, պաղ չունչովդ հոգն իջնէի, մեր վէյթնէն, մեր ձորերէն կուգայ...» մորմքաց սրբելով բուռ բուռ արցունքները։

(Շարունակելի)

ՂԱՐԻՊԻՆ ԿԵԱՆՔԷՆ

(ՀՈԳԻՆ ՁԱՑԸ)

«Աչիկ հոգին ջրին մեռնեի...»

3.

Գ.

Հայ մայրը չէր կրնար մոռնալ իր հայրենի լեռները, ծմակներն ու ձորերը, ջուրն ու հողը որոնցմէ արցունքով բաժնուեցան։ Հոնտեղ էին իր սիրելիներու անուշիկ մօր ու պապկան գերեզմանները՝ որոնք ամէն անգամ իրեն կը կանչէին «աղջի մեր ոսկորները չի մոռնաս, ուր երթաս ետ դարձիր մեր ծոցը մեռիր»։ Վառվառը թողուց հեռացաւ, եւ ցարմ օրերու մէջ այս վիճակին հասաւ։ Որ՞ինն է մեղքը—կը մտմտար կնիկն ինքնիրեն, գեղուհին խելացի էր, կշռող դատող, իր անաչառագիտութեամբ եւ ժրաջան աշխատանքով տունը կը կառավարէր. Երկան բացակայութեան ժամանակն իսկ։ Վառվառը սկսած էր խոր սրտով և քենով նայիլ այն մարդուն վրայ որը պատճառ եղաւ զաւակներն ու իրեն ձգեց ծովերու ետին։ Ամէն անգամ երբ Թորոս աղխարը աչքին կերեւնար սիրտը աւելի և աւելի կը լեցուէր։ «Ինչուս պէտք ես իյնայի ծովերու ետին, տուն ու տեղս բրչակ դարձնէի հող ու այգի խրապան, հազար հեզ գլխի մարդ չեմ գար դուն տուն դարձիր, ի՞նչ քրի ջի կարողցուց վրան։ Էն վերջը գիրն ու խապարը կտրեց,»— չե՞ս գար մէկ փարա չեմ ճամբեր գրեց, վեց տարի լեռների վրայ նստայ ճամբան պահեցի, նայելէն աչքս սեւ ջուր իջաւ, ախր ելայ ինկայ երկրոց երկիր այն պէկուման բնին տակ։ Մուրազին հասաւ։— է՛դ երկիրը ալ չապրիր

բուրեց։ «Բարով գարուն նախշուն գարնակ, ո՞ւրկի կուգաս, որմի՞ աշխարհէ մեր վէյթնին ճամբան ուրկից է?..» հարցուց հետաքրքրութեամբ, կապուտցած աչքերը լեցուցան և անսպառ ադրիւրի մը պէս լուսաւորուր արցունքները սկսան վար թափիլ։ Սիրան այրած կիներ վար ձըգեց ասեղն ու դերձանը, խելագարի պէս նետուեցաւ դէպի պ. տունը բացաւ դեղկերը։ Պաղ անուշ հով մը փչեց դէպի ներս, զարնուելով անոր ճակատն ցրցքնեց խորժ մազերը։ «Օ՛խ... օ՛խ... անուշ չունչովդ մեռնիմ, պաղ չունչովդ հոգն իջնէի, մեր վէյթնէն, մեր ձորերէն կուգայ...» մորմքաց սրբելով բուռ բուռ արցունքները։

(Շարունակելի)

սենեակը սրբելու, փոստատնիր կորեսպոնտենցիա բերելու, օղիի դատարկ շշերը վերադարձնելու, այս բոլոր գործերը կարգի դնելուց յետոյ, եթէ քէֆն ուզէր կը պարապէր իսկ եթէ ոչ կարձակէր աշակերտներին։ Աշակերտները այսպէս լաւ վարժուած էին ոչ թէ ուսումնական գործերում այլ ուրիշ գործերում։

Մի հատիկ ներկայացում իր կամքով, եթէ լինէր չէր թողնի որ Ուրմիում ներկայացնեն. ամեն ներկայացման սորան նորան կծում էր։ Դրադարանը համարեայ փակ էր, ոչ ոքի չէր թողնի որ օգտուի այդ հաստատութիւնից։ Պակաս ՁԼասներ չհաստատեց և յեղափոխական գործին, ամեն մի զղացմունք ամեն մի բարի գործ աշխատում էր տեղն ու տեղը խղդել։ այն գիւղերի ուսուցիչները, որոնք պրոպագանդա էին անում գիւղերում ժողովրդի մէջ նա այդ ուսուցիչներին կամ պատասխանատուութեան տակ էր գցում և կամ սպառնում էր մատնել նրանց կառավարութեան և կամ էլ պաշտօնից հեռացնել էր տալիս։

Ահա այդպէս երկու տարի այդ հրէշը իբրեւ ուսուցիչ և տեսուչ կործանեց ամեն ինչ Ուրմիայում։

Երբ առաջ եկան մի քանի բանիմաց երիտասարդներ և խաստառակ կերպով դուրս վռնտեցին նա ուրիշ միջոց չգտաւ հեռանալուց բացի։ Իրաւունք թերթում փորձ է անում վերջին յուսահատ ճիչը արձակելու բայց ի զուր։ այդ յօդուածին եկող անգամին փասատի կ'պատասխանենք։ Ժամանակ է որ վերջ տրուի այսպիսի խաստառակ հասարակական կեղծ գործիչների ազգակործան ընթացքին։

Պ ՕՍՏԵՐՄԱՆ

Ռուսչուք, 24 փետր.

Մենք հոս չենք ծանրանալու Վարդանանց տօնի առթիւ կատարուած հանդէսով։ Դրա նկատմամբ միայն սա չափ կասենք՝ թէ երգեցին ազատ երգեր, (դպրոցականների և երգեցիկ խմբի կողմից) յեղափոխական ճառեր արտասանեցին... եւ հանդէսը փակեց՝ ուսուցիչ Պ. Տոքէսեանի մի համառօտ եւ սրտաթունդ ճառով։

Մենք կըծանրանանք աւելի հոգաբարձութեան կողմանից եղած պատրաստութեան՝ մրայ մասնաւորապէս կանխօրօք հրապարակուած հրաւէրին, որի պարունակութիւնը հետեւեալն է.

«Ինչպէս ամեն տարի և ամեն տեղ, ուր հայ ազգը բոյն դրած է, ըլլայ օտար աստղերու տակ, ըլլայ իր հայրենի երկրին մէջ, Վարդանանց աօնին առթիւ «հանդէսներ կը կազմակերպուին։

«Ուստի այս առթիւ Ռուսչուքի «հայ գաղութն ալ իր մասնակցութիւնը ունեցած ըլլալու համար ըստ վազեմի սովորութեան «այս տարի ալ, յառաջիկայ «հինգշաբթի.... Եկեղեցւոյ ա«ւարտումից յետոյ, մեծատպէս «պիտի տօնի Վարդանաց անմո«ռանալի յիշատակը, Մեսրոպ. «վարժարանի մէջ մասնաւոր յայ«տագրի մը համաձայն։

«Արդ, կը խնդրուի յարգոյ «ազգայիններէն որ «բացառաբար», գէթ տարին մի անգամ «սոյն օրը «իրենց վաճառատուն«ները փակեն», յարգելու հա«մար յիշատակը հայ եկեղեցւոյ «պաշտպան՝ Վարդանանց նահա«տակներուն—ազգակ մեր ազգա«յին գոյութեան — եւ հաճին «ներկայ գտնուիլ սոյն հանդէ«սին։

«Աւելորդ է ըսել թէ ամէն հայ «անհատ որ նախանձախնդիր է «ազգային արժանապատուութեան «չպիտի դեղեւի յարգելու սոյն «մեր հրաւէրը և չպիտի վարա«նին «փակելու իր գործատեղին» «օտար ազգաց առջեւ ցոյց տա«լու համար թէ հայ ազգն ալ գի«տէ յարգել իր ազգ. տօները»։

Եւ այսպէս հարուստ վաճառականը և «էսնաֆ» խանութպանը փակել էր իրա վաճառատունը և կրպակը ու իր ընտանիքով եւ զաւակներով ներկայ էր գտնվուս հանդէսին։

Արդոյ հոգաբարձութեան այս արարքը մեզ համար ուրախալի մի երեւոյթ է և դրանով, մենք Ռուսչուքի հայերս կարող ենք պարծենալ ասելով՝ թէ մեր կըրթական գործի վարչութեան՝ գործի գլուխ անցած են՝ կոչման արժանի և հայ այժմէութեան պահանջներուն յարմարող անձինք։

Սիրակ Արամեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Պարտութիւնը ժողովրդին վրայ շատ զէշ ազդած է. Բեթերսպուրկ և Մոսկուա ժողովրդին և կառավարութեան միջեւ նոր ընդհարումներ տեղի ունեցեր են։

—Մոսկուայի մէջ կրկին մեծ քանակութեամբ զէնքեր և ռումբեր գտեր է ոստիկանութիւնը։

—Բեթերսպուրկի Բրիսթոլ կոչուած հիւրանոցին մէջ ռումբ մը պայթեր է։

—Վերջին պատերազմական խորհուրդին մէջ, որ տեղի ունեցեր է 8ին նախագահութեամբ որոշուեր է պատերազմը շարունակել. մէկ քանի զօրաբաժիններ զէնքի կանչուած են Մանչուրիա երթալու համար։

—Կը լսուի թէ Քուրոբաթքինի ետ կանչուիլը որոշուած է և անոր պիտի յաջորդէ մեծ դուքս Նիքոլա Նիքոլայեւիչ։

Ռուս մամուլը վերջին պատերազմի առաջ

„Ռուս“ թերթը կը գրէ. «Ժողովուրդը խռովուած է սարսափահար տեղեկութիւններէն. ճակատամարտը սկսած է վտանգաւոր դառնալ, ռուսները, 22ին երկաթուղիի գծին ետեւէն անցան որը արդէն թշնամիին ձեռքը կը գտնուի։ Արիւնոտ ուրուականը կը սաւառնի Մանչուրիոյ գլխուն վերեւը։ Զոհերու հեծեծանքները Ռուսիոյ կուտան ճակատագրական հարցը...

„Նովօստի“ հետեւեալը կը գրէ «Նահանջը յայտնի պարտութիւն է. որ կը նշանակէ թէ պատերազմը կորսնցուցած ենք։ Պատերազմը շարունակելու համար 400000 թարմ զօրք պէտք է որը սակայն շատ հաւաքելը՞ անհնարին է։

«Պաշտօնական շրջանակներ կսեն թէ Քուրոբաթքին դէպ իր նախագծած սահմանը կերթայ. ուրէ այդ տխրահռչակ սահմանը։ Ամենէն առաջ Լեաօեանկն էր, վերջը Մուքտէնը, հիմա Թէլինը, կարելի է եւ Վլատիվոսթոքը. չը պէտք է մոռնալ որ ամեն մէկ նոր սահմանէն ետքը հաշտութիւն կնքելու պայմանները կը գժուարանան Ռուսիոյ համար։

Պատերազմին այս պայմաններուն մէջ այլեւս անկարելի է պատուաւոր հաշտութիւն, նոյնիսկ տանելի հաշտութիւնը»։

ԹԱՒՐԻԶ

Եմէնի ապստամբութիւնը հետզհետէ կը զօրանայ. արաբները կը յուսան որ պիտի կարենան Թուրքիայէն ազատուիլ։ Անոնց կարեւոր դէմքերէն մին կը յայտարարէ որ իրենք կուզեն Թուրքիոյ կազմալուծումը և միւս ցեղերուն ալ անկախութիւնը։

ԱՆԳԼԻԱ

Ռուսական դեսպանը Լօրտ Լանսդաունի յանձնեց 1,625,000 ֆր. ի վարձատրութիւն Հուլի միջադէպի առթիւ ՁԼասուածներուն։

ՃԱՊՈՆԻԱ

Ճապոնիոյ մէջ մեծ ուրախութիւն կը տիրէ վերջին յաղթութեան առթիւ. բոլոր թերթերը կը գրեն որ պատերազմը պէտք է շարունակել։

—Մարշալ Օյաման Մուքտէնի մէջ թաղուած չինական կայսերական տան անդամներու յիշատակը յարգած ըլլալու համար շրջաբերականով մը զօրքերուն հրամայած է որ զօրքերը քաղաքի ներսը բնակարաններ չընտրեն։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Փետրուար 26ի առաւօտեան կատարի ճակատամարտէ մը վերջ ճապոնցիները մտան Մուքտէն։

Այս ճակատամարտին մէջը ուր երկու կողմէն կը մասնակցէին մօտ 800,000 հոգի, ռուսները սարսափելի կորուստներ ունեցան թէ մարդու և թէ զանազան մբերներով։ Զանազան տեղեկութիւններու հաշուով ռուսական Մանչուրիոյ զօրքին գրեթէ մէկ քառորդը ոչնչացան այդ աշխարհիս մէջ դեռ չի տեսնուած հրակայական ճակատամարտին մէջ։

Ճապոնցիք Քուրոբաթքինի նահանջող բանակը բաժան բաժան ընելով կը յառաջանան դէպի Թէլին. ուր նոյնպէս խոշոր ճակատամարտ մը կոպաստի. Ռուսական այս չտեսնուած պարտութիւնը կը վերագրուի ճապոնական թնդանօթներու գերազանցութեան և ռուսական պատերազմական նիւթերու պակասութեան։

—Բարիզի ճապոնական դեսպանատունը հետեւեալ պաշտօնական տեղեկութիւնները կուտայ ռուսական կորուստներու մասին.

Ռուս գերիներուն թիւը 40000ի կը հասնի։ մարտի դաշտին մէջ ինկածներու թիւը 36000ի, գերի ինկած են 2 դրօշակներ, 30 թնդանօթ, 60000 հրացան, 150 պատերազմական մթերներու սայլեր, 25 միլիոն փամփուշտ, 2000 ձի, մեծ քանակութեամբ հացահատիկներ, և պատրաստի հաց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պօսթոն հրատարակուող «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթը՝ դիւրութեամբ ստանալ ուզող Պուլկարիոյ եւ Ռումանիոյ՝ Հնչակեան մեր մասնաճիւղերը և ընկերները իրենց որոշ հասցէներով՝ պէտք է դիմեն հետեւեալ հասցէին։

Г. Танчо Пеняовъ ул. Опълченска № 1 за Х. Х. Х. Пловдивъ

Տոքթոր Թորոսեան կընդունի ամէն տեսակ հիւանդներ, կէսօրէն վերջը ժամը 2էն մինչեւ 4

Բնակարանն է

Փողոց Տունաւսքա թիւ 3

—○—

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна